ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության

ԼԻՑԵՆԶԻԱ

ԼԷ №0628 (11 էջից)

Տրվում է «ՔԼԻՆ ԷՆԵՐԳԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև 2040 թվականի դեկտեմբերի 1-ը գործողության ժամկետով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 30-ի №438Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Մ. Սողոմոնյան

«30» նոյեմբերի 2018 թ.

ԵՐԵՎԱՆ - 2018թ.

AMERICAN BANK NOTE COMPANY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-21 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 30 » նոյեմբերի 2018թ.

№ ՂԱՍ-3209/

«ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Դ. Զաքարյանին

Հարգելի պարոն Զաքարյան,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 30-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Վայոց Արև-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №438Ա որոշման պատճենը:

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Շ. Սողոմոնյան ☎56-49-27 (345)

600.0438.30.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2018 թվականի №438Ա

ք.Երևան

«ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 3-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Վայոց Արև-1» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածք, Զեղեա գյուղ) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2040 թվականի դեկտեմբերի 1-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը:
2. Հաստատել «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վայոց Արև-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
30 նոյեմբեր 2018թ.

Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի նոյեմբերի 30-ի №438Ա որոշմամբ

«ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0628 լիցենզիայի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացություններն են.

1) **Առևտրային կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններ, որոնք կանոնակարգում են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների առևտրային փոխհարաբերությունները.

2) **Լիցենզավորված անձ՝** «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

4) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոններ.

5) **Ցանցային կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններ, որոնք կանոնակարգում են հաղորդման և բաշխման ցանցերի զարգացման պլանավորման, կառավարման, կարգավորման և այդ ցանցեր մուտքի ապահովման հետ կապված հարաբերությունները:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ՎԱՅՐԸ)

2. Սույն լիցենզիան ուժի մեջ է մտնում 2018 թվականի դեկտեմբերի 1-ից:

3. Սույն լիցենզիան գործում է մինչև 2040 թվականի դեկտեմբերի 1-ը, որից՝

1) մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2040 թվականի դեկտեմբերի 1-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը:

4. Սույն լիցենզիայի՝ սույն գլխով նախատեսված ժամանակահատվածի (ժամկետի) երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

5. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածքն է (գյուղ Զեղեա):

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել 5000 կՎտ տեղակայվող հզորությամբ «Վայոց Արև-1» արևային էլեկտրակայանը (այսուհետ՝ Կայան), ինչպես նաև իրավունք է տրվում արտադրել էլեկտրական էներգիա:

7. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում՝

1) մեծածախ շուկայում վաճառել կամ արտահանել իր արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը)՝ Շուկայի կանոնների համաձայն,

2) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել էլեկտրական էներգիա (հզորություն), եթե սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները:

8. Լիցենզավորված անձը էլեկտրական էներգիան կարող է օգտագործել նաև սեփական կարիքների համար:

9. Կայանի կառուցման ավարտից հետո կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը կամրագրվի սույն լիցենզիայում:

10. Օրենքով գնման երաշխիք ունեցող էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվում և վերանայվում է Հանձնաժողովի կողմից սույն լիզենցիայի պայմանների №1 հավելվածով սահմանված մեթոդիկայի համաձայն:

11. Օրենքով գնման երաշխիք չունեցող կամ գնման երաշխիքի ժամկետը լրացած էլեկտրականից առաքվող էլետրական էներգիայի (հզորության) սակագներ չեն սահմանվում, եթե կայանը Շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով էլեկտրական էներգիան (հզորությունը) վաճառում է մրցակցային պայմաններով՝ չկարգավորվող գներով: Նման կայաններից երաշխավորված մատակարարին վաճառվող էլեկտրական էներգիայի գնման պայմանները սահմանվում են Շուկայի կանոններով:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, Ցանցային կանոնների, Առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

13. Լիցենզավորված անձի կողմից Կայանի կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն էլեկտրականի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

14. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով:

15. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև սույն լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել էլեկտրականի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը, իսկ էլեկտրական էներգիայի վաճառքի մտադրության դեպքում՝ նաև Էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտ՝ համաձայն Հանձնաժողովի սահմանած կարգի: Այն դեպքում, երբ էլեկտրականի հզորությունը տեղադրվել է մասնակի, սույն կետով նախատեսված դրույթները կիրառվում են էլեկտրականի փաստացի տեղակայված հզորության մասով:

16. Լիցենզավորված անձը շուկայի օպերատորի հաշվառմանն է ներկայացնում մեծածախ շուկայում կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանում նախատեսող պայմանագրերը՝ համաձայն Շուկայի կանոնների:

17. Լիցենզավորված անձը (10 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ կայանների դեպքում) պարտավոր է կատարել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հրահանգները՝ համաձայն Ցանցային կանոնների:

18. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, իսկ դրանով ամրագրված էլեկտրական էներգիայի արտադրության գործառույթը որևէ ձևով փոխանցվել այլ անձի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ գործունեության մեջ ներգրավված գույքի հասանելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

21. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե դա Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չի որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձի ներկայացրած գաղտնապահական տեղեկատվության հետ կապված հարցերը կարգավորվում են

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

26. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

27. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

28. Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

29. Լիցենզավորված գործունեության վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

30. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է աջակցի Հանձնաժողովին՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան փաստաթղթեր:

6. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

31. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, սույն լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.
2) օրենքով սահմանված տուգանքներ.
3) լիցենզիայի գործողության կասեցում.
4) լիցենզիայի գործողության դադարեցում:

32. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

33. Լիցենզավորված անձը սույն լիցենզիայի պայմանների 31-րդ կետում նշված խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի: Սույն լիցենզիայի պայմանների իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) Լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում Լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
2) Լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.
3) Լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

34. Սույն լիցենզիայի պայմանների իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.
2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել.
3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, չի երկարաձգվել սույն լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ

պարտավորության կատարումը, պայմանով, որ Լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

35. Սույն լիցենզիայի պայմանների 34-րդ կետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ սույն գլխի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:

7. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

36. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

37. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

38. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում սույն լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

«ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

(ընկերության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, քաղաք Վայք, Շահումյան փողոց, 62 տուն

(գտնվելու վայրը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՍԱՖԱՐՅԱՆ**

Հավելված №1
Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության
ԼԷ №0628 լիցենզիայի պայմանների

ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ՍԱԿԱԳՆԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

1. Սույն հավելվածում օգտագործված հիմնական հասկացություններն են.

1) **Էլեկտրական էներգիայի սակագին՝** Լիցենզավորված անձի համար միադրույթ սակագնային համակարգում սահմանված՝ առաքված էլեկտրական էներգիայի սակագին.

2) **Պաշտոնական փոխարժեք՝** որոշակի ժամանակահատվածի համար հայկական դրամով արտահայտված մեկ ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքի մեծություն.

3) **Սղաճ՝** Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից որոշակի ժամանակահատվածի համար հրապարակված սպառողական գների ինդեքս.

4) **Օրենսդրության փոփոխություն՝** 2019 թվականի հունվարի 1-ից հետո մինչև 30 ՄՎտ հզորությամբ օրենքով գնման երաշխիք ունեցող կայանների մեղքով չպայմանավորված նորմատիվ իրավական ակտի ընդունում, փոփոխություն կամ լրացում:

2. Էլեկտրական էներգիայի սակագինն առաջին անգամ Հանձնաժողովը սահմանում է Լիցենզավորված անձի հայտի հիման վրա: Եթե Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ընդունվում է՝

1) մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը, ապա սահմանվող էլեկտրական էներգիայի սակագնի մեծությունն ընդունվում է տվյալ տարվան նախորդող տարվա հուլիսի 1-ից այդօրինակ էլեկտրակայանների համար Հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությանը հավասար, որը գործում է 6 ամիս, իսկ այնուհետև սահմանվող էլեկտրական էներգիայի սակագնի մեծությունն ընդունվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից այդօրինակ էլեկտրակայանների համար Հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությանը հավասար, որը գործում է մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը.

2) տվյալ տարվա հունիսի 1-ից հետո, ապա սահմանվող էլեկտրական էներգիայի սակագնի մեծությունն ընդունվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից այդօրինակ էլեկտրակայանների համար Հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությանը հավասար, որը գործում է մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը:

3. Հետագա տարիների համար էլեկտրական էներգիայի սակագնի վերանայումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը: Վերանայման արդյունքում սահմանված էլեկտրական էներգիայի սակագինն ուժի մեջ են մտնում տվյալ տարվա հուլիսի 1-ից և գործում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը: Հանձնաժողովը էլեկտրական էներգիայի սակագինը հաշվարկում է՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$T = T_1 * \left(K_1 \frac{CPI}{100} + K_2 * \frac{R_1}{R_2}\right),$$

որտեղ՝

T-ն սահմանվող էլեկտրական էներգիայի սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),

T_1-ը այդօրինակ էլեկտրակայանների համար Հանձնաժողովի սահմանած գործող սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),

K_1-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ Սղաճի տեմպով պայմանավորված և ընդունվում է հավասար 0,1-ի,

CPI-ն Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա Սղաճն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

K_2-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման Պաշտոնական փոխարժեքի փոփոխմամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0,9-ի,

R_1-ը ընթացիկ տարում Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա Պաշտոնական փոխարժեքն է,

R_2-ը R_1 մեծության որոշման համար ընդունված ամսվան համապատասխանող՝ նախորդ տարվա նույն ամսվա Պաշտոնական փոխարժեքն է:

4. Եթե Էլեկտրական էներգիայի սակագնի սահմանումից կամ վերանայումից հետո R_1 մեծության և մինչև հաշվարկային տարվա նոյեմբերի 1-ը որևէ ամսվա Պաշտոնական փոխարժեքի փաստացի մեծության շեղումը կազմում է ավելի քան 15 տոկոս, ապա Հանձնաժողովը վերանայում է Էլեկտրական էներգիայի սակագինը (բացառությամբ այն դեպքի, երբ սակագնի գործողության 6 ամիսը չի լրացել)՝ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված բանաձևում փոխելով միայն R_1 մեծությունը, որն ընդունվում է Պաշտոնական փոխարժեքի տվյալ ամսվա միջին փաստացի մեծությանը հավասար: Վերանայման արդյունքում սահմանված Էլեկտրական էներգիայի սակագինն ուժի մեջ է մտնում հաշվարկային տարվա հունվարի 1-ից և գործում է մինչև տվյալ տարվա հուլիսի 1-ը:

5. Սույն հավելվածի 4-րդ կետի համաձայն սահմանված Էլեկտրական էներգիայի սակագինը վերանայվում է սույն հավելվածի 3-րդ կետում սահմանված ժամկետում՝ նույն կետով սահմանված բանաձևում R_2 մեծությունն ընդունելով սույն հավելվածի 4-րդ կետում նշված R_1 մեծությանը հավասար:

6. Օրենսդրության փոփոխության դեպքում, որը մինչև 30 ՄՎտ հզորությամբ օրենքով գնման երաշխիք ունեցող կայանների համար կառաջացնի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեությանն առնչվող ծախսերի ավելացում կամ նվազեցում՝ մեկ կայանի հաշվով որևէ հաշվարկային տարում 7 միլիոն կամ երկու և ավելի հաշվարկային տարիների համար աճողական 14 միլիոն (առանց հաշվի առնելու նախկինում փոխհատուցված մեծությունը) դրամ և ավելի չափով, ապա սույն հավելվածի 3-րդ կետում նշված T_1 մեծությունը պետք է ճշգրտվի այնպես, որ մինչև 30 ՄՎտ հզորությամբ օրենքով գնման երաշխիք ունեցող կայանը պահպանի նույն ֆինանսական վիճակը, որը կունենար Օրենսդրության փոփոխության բացակայության դեպքում: